

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ԽԱՐՉԵՎԻ ԱՅՑԸ ԺՆԵՎ

Սույն թվականի սեպտեմբերի 5—9 օրերին Սովետական Միության Մինիստրների խորհրդին առընթեր եկեղեցական գործերի խորհրդի նախագահ տիար Կոնստանտին Խարչևը, պատասխանելով Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի, Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի, Լութերական Համաշխարհային Ֆեդերացիայի և Համաշխարհային Վերակազմյալ Եկեղեցիների հրավերներին, պաշտոնական այցով եղավ Ժնևում: Սույն այցելության առթիվ հարգարժան հյուրին ուղեկցում էին Սովետական Միությունում գործող քրիստոնեական Եկեղեցիների մի խումբ բարձրաստիճան ներկայացուցիչներ. Ռուս Պրավոսլավ Եկեղեցու կողմից՝ Տ. Ալեքսի միտրոպոլիտը և Տ. Կիրիլ արքեպիսկոպոսը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կողմից՝ Տ. Ներսես արքեպիսկոպոսը, Էստոնիայի Լութերական Եկեղեցու կողմից՝ Տ. Պաուլո արքեպիսկոպոսը, և Մկրտչական Եկեղեցու կողմից՝ հոգևոր հովիվ Բիչկովը:

Սեպտեմբերի 5-ին, երկուշաբթի օրը, առավոտյան, պրն. Խարչևը այցելեց ԵՀԽ-ի կենտրոն, ուր առանձին տեսակցություն ունեցավ խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. Էմիլիո Կաստրոյի հետ, ապա իր գլխավորած պատվիրակության անդամների հետ միասին ՄԱԿ-ի Ժնևի կենտրոնակայանում հանդիպում ունեցավ կազմակերպության գլխավոր քարտուղար դոկտ. Գոմիդետայի հետ: Հարգարժան հյուրընկալը իր ընդունարանում Սովետական Միության Եկեղեցիների ներկայացուցիչներին մանրամասն տեղեկություններ հաղորդեց ՄԱԿ-ի Ժնևի բաժանմունքի աշխատանքների մասին: Բարեկամական մթնոլորտում տեղի ունեցած զրույցի ընթացքում շոշափվեցին զինաթափության, միջուկային սպառազինության կրճատման, ցեղային խտրականության ու անարդարությանց դեմ մղվող պայքարի, աշխարհի խաղաղության ամրապնդման, ինչպես նաև արդիականության վերաբերյալ մի շարք այլ հարցեր:

Նույն օրը, կեսօրին, ԵՀԽ-ի կենտրոնում գումարվեց հատուկ նիստ, որի ընթացքում ԵՀԽ-ի ղեկավար անձնակազմը հյուրերին ծանոթացրեց Խորհրդի առանձին բաժիններում տարվող աշխատանքներին: Ապա գլխավոր քարտուղար դոկտ. Էմիլիո Կաստրոն, ի պատիվ պրն. Խարչևի և նրան ընկերակցող մեծարգո հյուրերի, տվեց ճաշկերույթ, որն անցավ ջերմ, սիրալիր մթնոլորտում:

Կեսօրից հետո Սովետական Միության քրիստոնեական Եկեղեցիների պատվիրակությունը, գլխավորությամբ պրն. Խարչևի, հանդիպում և զրույց ունեցավ Համաշխարհային Վերակազմյալ Բողոքական Եկեղեցու ղեկավար անձանց հետ: Զրույցի ընթացքում պատվիրակության անդամներին տեղեկություն տրվեց Եկեղեցիների միջև գործակցության, փոխօգնության և էկումենիկ ոգով իրագործվող աշխատանքի նոր մեթոդների մասին: Այս առթիվ ևս տիար Խարչևը անդրադարձավ մի շարք այժմեական հարցերի, այդ թվում Սովետական Միությունում կրոնական կյանքին վերաբերող մի նոր կանոնադրության ստեղծմանը:

Նույն օրը, երեկոյան, ՀՎԲԵ ներկայացուցիչները հին Ժնևում, որտեղ նոր պեղումներ էին կատարվել, հյուրերին առաջնորդեցին Ս. Պետրոս Մայր եկեղեցի, ծանոթացրին շրջակայքի հնություններին,

ապա մոտակա ռեստորանում հյուրասիրեցին նրանց:

Սեպտեմբերի 6-ին, երեքշաբթի օրը, պրն. Խարչևը, ընկերակցությամբ պատվիրակության երկու ներկայացուցիչների, հանդիպում ունեցավ Համաշխարհային Լութերական Ֆեդերացիայի ղեկավար անձանց հետ: Գործարար մթնոլորտում տեղի ունեցած օգտակար զրույցի ընթացքում պրն. Խարչևը գոհացուցիչ պատասխաններ տվեց նրանց բոլոր հարցերին:

Նույն օրը, առավոտյան, Սովետական Միության քրիստոնեական Եկեղեցիների ներկայացուցիչները այցելեցին Ժնևում ՄԱԿ-ի մոտ Սովետական Միության դեսպան տիար Նազարգինին: Մեծարգո պրն. դեսպանը մանրամասն ու հանգամանալից տեղեկություններ տվեց ՄԱԿ-ում Սովետական Միության կատարած խաղաղասիրական կարևոր աշխատանքի մասին:

Այնուհետև պատվիրակության անդամները այցելեցին ՄԱԿ-ի բաժանմունքի կենտրոնակայան, ուր ներկա եղան նստաշրջանի բացմանը: Այս առթիվ ՄԱԿ-ի բաժանմունքի գլխավոր քարտուղարը ողջույնի և բարիգալստյան խոսք ուղղեց Սովետական Միության Եկեղեցիների ներկայացուցիչներին: Ապա հյուրերը ծանոթացան ՄԱԿ-ի շենքի զանազան բաժիններին:

Կեսօրին պրն. Խարչևը և նրան ուղեկցող բարձրաստիճան հոգևորականները ներկա եղան Համաշխարհային Լութերական Ֆեդերացիայի կողմից իրենց պատվին կազմակերպված պաշտոնական ճաշկերույթին:

Հետմիջօրեին պատվիրակության անդամները՝ գլխավորությամբ պրն. Խարչևի, ԵՀԽ-ի կենտրոնում հանդիպում ունեցան ԵՀԽ-ի գործադիր մարմինների ղեկավարների հետ, որոնք մի շարք հարցեր տվեցին Կ. Մ. Խարչևին Սովետական Միությունում Եկեղեցիների և պետության հարաբերություններին վերաբերող նոր կանոնադրության մշակման, Լեռնային Ղարաբաղի հայկական եկեղեցիների վերաբացման, հոգևոր վարժարանների բացման և այլ կարևոր հարցերի մասին:

Նույն օրը, երեկոյան ժամը 18.30-ին, Ժնևի Սովետական Միության ներկայացուցչության շենքում կազմակերպվեց հանդիսավոր երեկո՝ նվիրված ռուս ժողովրդի մկրտության 1000-ամյակին: Այս առթիվ ելույթներ ունեցան դոկտ. Էմիլիո Կաստրոն, դոկտ. Կունարը, դոկտ. Թ. Սաբևը, կանոնիկոս Ջոն Առնոլդը, Կ. Մ. Խարչևը և ուրիշներ: Հանդիսության վերջում տեղի ունեցավ ճոխ հյուրասիրություն:

Սեպտեմբերի 7-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, Կ. Մ. Խարչևը և պատվիրակության անդամները մեկնեցին Բոսե, ուր տեղի ունեցավ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի ղեկավար մարմնի հետ հանդիպում և հարցազրույց:

Շուրջ չորս ժամ տևող սույն հանդիպման ընթացքում, ԵԵԿ-ի նախագահ միտրոպոլիտ Ալեքսին, փոխնախագահ կանոնիկոս Ջոն Առնոլդը և գլխավոր քարտուղար Ջոն Ֆիշերը հյուրերին մանրամասնորեն ծանոթացրին ԵԵԿ-ի աշխատանքներին: Այս առթիվ գլխավոր քարտուղար Ջոն Ֆիշերը մի շարք հարցեր ուղղեց Կ. Մ. Խարչևին Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների, այդ շրջանում հայկական եկեղեցիների վերաբացման, ինչպես նաև Սովետական Միությունում իսլամ-քրիստոնյա հարաբերությունների վերաբերյալ:

Կեսօրին պատվիրակությունը ճաշեց Բոսեի էկումենիկ ինստիտուտում:

Հետմիջօրեին Սովետական Միության Եկեղեցիների ներկայացուցիչները, Կ. Մ. Խարչևի գլխավորությամբ, ԱՄՆ-ի դեսպանատանը հանդիպում ունեցան ԱՄՆ—ՍՍՀՄ զինաթափության ԱՄՆ-ի հանձնաժողովի ներկայացուցչի հետ: Հանդիպումն անցավ ջերմ, բարեկամական մթնոլորտում:

Նույն օրը, երեկոյան ժամը 18.30-ին, Ժնևի հայ եկեղեցական համայնքը տեղի «Բո Ռիվաժ» հյուրանոցի շքեղ դահլիճում, ի պատիվ մեծարգո հյուրի և նրան ուղեկցող բարձրաստիճան անձանց, կազմակերպեց պաշտոնական ընդունելություն: Ընդունելության ընթացքում ելույթներ ունեցան Ժնևահայ համայնքի հոգևոր հովիվ Տ. Վիգեն վարդապետ Այքազյանը, եկեղեցական խորհրդի ատենապետ տիար Է. Փափազյանը, տիար Ա. Ծելեֆյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, ինչպես նաև Ռուս Եկեղեցու անունից՝ Տ. Կիրիլ արքեպիսկոպոսը: Վերջում Ժնևահայ համայնքին ուղղված ողջույնի խոսքով հանդես եկավ Կ. Մ. Խարչևը: Անդրադառնալով Ղարաբաղում հայկական մի շարք եկեղեցիների վերաբացման մասին իրեն տրված հարցերին՝ Սովետական Միության կրոնական գործերի խորհրդի նախագահը հավաստիացրեց, որ մոտակա ամիսներին, ամեն ջանք ի գործ դնելով, հնարավոր պիտի լինի Ղարաբաղում բացել Գանձասարի վանքն ու այլ եկեղեցիներ: Այս առթիվ պրն. Խարչևը բարձր գնահատեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի խաղաղասիրական, շինարարական և հայրենասիրական գործունեությունը, որպես եկեղեցական մեծ գործչի:

Ընդունելությունն ավարտվեց ուշ երեկոյան ջերմ և խանդավառ մթնոլորտում:

Սեպտեմբերի 8-ին, հինգշաբթի օրը, ընդառաջելով Վերակազմյալ Եկեղեցիների Համաշխարհային Ֆեդերացիայի հրավերին, կեսօրից հետո պատվիրակության անդամները մեկնեցին Բեռն քաղաք: Նույն օրը Կ. Մ. Խարչևը Բեռնում հանդիպում ունեցավ Կոնֆեդերացիայի նախագահ պրն. Բուների հետ:

Այնուհետև «Բեռն» հյուրանոցում տեղի ունեցավ ընդունելություն՝ ի պատիվ բարձրաստիճան հյուրի: Այստեղ Վերակազմյալ Եկեղեցիների ներկայացուցիչները մի շարք հարցեր տվեցին Կ. Մ. Խարչևին Սովետական Միությունում գործող եկեղեցիների մասին: Ճաշկերույթն ավարտվեց ջերմ մթնոլորտում:

Սեպտեմբերի 9-ին, ուրբաթ օրը, հետմիջօրեին, ԵՀԽ-ի կենտրոնում կազմակերպվեց հանդիպում-հարցազրույց, որին հրավիրվել էին կարևոր թերթերի թղթակիցներ և ԵՀԽ-ի ողջ պաշտոնեությունը:

Նույն օրը, երեկոյան, Ռուս Պրավոսլավ Եկեղեցու եպիսկոպոսարանում հանդիսավոր կերպով նշվեց Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի անվանակոչության տարեդարձը: Այս առթիվ հրավիրվել էին Կ. Մ. Խարչևը, Սովետական Միության Եկեղեցիների պատվիրակության անդամներն ու պաշտոնական այլ անձինք:

Պիմեն Պատրիարքի անվանակոչությանը շորհավորանքի խոսքով հանդես եկավ նաև Կ. Մ. Խարչևը:

ԹՂԹԱԿԻՑ